

# **Manoogian Simone Research Fund (MSRF)**

*Թեմա. Ադրբեջանի կողմից ՀՀ և Արցախի դեմ կիրառվող տեղեկատվական պայքարի գործիքակազմը*

## **1. Հիմնախնդրի նկարագրությունն ու դրա արդիականությունը**

Տեղեկատվական պայքարը ոչ միայն պատերազմական գործողությունների, այլև քաղաքական գործընթացների անօտարելի բաղադրիչներից է: Տեղեկատվական գործողությունների ազդեցությունն ու նշանակությունն առավել ակնառու են հատկապես կապի և տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցների հասանելիության պայմաններում: Ինչպես Արցախյան երկրորդ պատերազմին նախորդած ժամանակաշրջանում, այնպես էլ պատերազմական գործողություններին զուգահեռ հակառակորդն իրականացրել է բացահայտ և քողարկված տեղեկատվական տարաբնույթ գործողություններ՝ միտված ՀՀ-ում և Արցախում հասարակական տրամադրությունների վրա ներգործությանը:

## **2. Հետազոտության նպատակը և դրա հնարավոր ազդեցությունը համապատասխան քաղաքականության մշակման վրա**

Հաշվի առնելով 2020թ. սեպտեմբերի 27-ից հետո երկրում ստեղծված իրավիճակը՝ հետազոտության նպատակն է վեր հանել տեղեկատվական դաշտում մեր հասարակության համար հոգեբանական ազդեցություններ ստեղծող և հակառակորդի կողմից կիրառվող տեղեկատվական պայքարի գործիքները և բովանդակությունը, գնահատել դրանց արդյունավետությունը և ազդեցությունը հանրության շրջանում, ներկայացնել այդ ազդեցության նվազեցման, հնարավորության դեպքում՝ չեզոքացման գործիքակազմ:

## **3. Հետազոտության մեջ ուսումնասիրվելիք կոնկրետ խնդիրներն ու հարցադրումները**

- ՀՀ և Արցախի դեմ Ադրբեջանի կողմից վարվող տեղեկատվական պայքարի շրջանակում կիրառվող տեղեկատվական-հոգեբանական գործողությունների (Information Operations, Psychological operations) դասակարգում՝ ըստ կիրառվող/կիրառված գործիքակազմի, մեթոդների և միջոցների:
- Տեղեկատվական թեզերի բովանդակությունն՝ ըստ թիրախային խմբերի:

# Manoogian Simone Research Fund (MSRF)

- 2020թ. սեպտեմբերին ձևավորված թուրք-ադրբեջանական մեդիա հարթակի խնդիրները և գործունեությունը:
- Կիրառվող տեղեկատվական-հոգեբանական գործողությունների ազդեցությունը հայ հասարակության շրջանում:
- Ռիսկերի նվազեցման հնարավոր առաջարկներ:

## 4. Հետազոտությունից ակնկալվող արդյունքը

Հետազոտության արդյունքում ակնկալվում է գույքագրել տեղեկատվական պայքարի դաշտում առկա խնդիրները, ձևավորել դրանց հաղթահարման հնարավոր ուղիներ և միջոցներ: